«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (PURE-WATER) ԾՐԱԳԻՐ

Երևան, ապրիլ 2019

Համագործակցության պայմանագիր՝ AID-111-A-17-00005

Ծրագրի անվանումը ՝ Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում
Ֆինանսավորող՝ Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)
Ծրագրի իրականացնող՝
«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ.
ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները/կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Վերստուգելի չափանիշը
1	2	3	4	5	6	7
Բարեփոխումների համար անհրաժեշտ իրավական դաշտի նախապատրաստում						
«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում, նախագծի ընդունման արդյունքում այլ իրավական ակտերում հնարավոր փոփոխությունների անհրաժեշտության գնահատում:	«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի առկայություն, որը հենված կլինի ոլորտի պրակտիկայի ուսումնասիրության և խնդիրների լուծմանն ուղղված հիմնավոր մոտեցումների վրա, Իր մեջ կներառի ՋՕԸ-երի թափանցիկության, հաշվետվողականության, մասնակցային կառավարման երաշխիքներ, կսահմանի պետական և այլ մարմինների հետ	ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե		2019թ. մայիսի 31	Չի պահանջվում	«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակված է ակնկալվող արդյունքի նկարագրին համապատասխան և դրվել է շրջանառության մեջ:

	փոխհարաբերությունների սկզբունքներն ու ինքնավարության երաշխիքները, կապահովի ջրօգտագործողների շահերի արդյունավետ պաշտպանության և ՋՕԸ-ի կողմից համակարգի արդի խնդիրներին հակազդման հուսալի մեխանիզմներ:					
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով սահմանել ոռոգման ոլորտում ջրօգտագործման հետ կապված իրավախախտումների առնչությամբ ջրօգտագործողի և ՋՕԸ պատասխանատվության մեխանիզմները, ըստ որոնց վարչական	ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե		2019թ. մայիսի 31	Չի պահանջվում	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակված է ակնկալվող արդյունքի նկարագրին համապատասխան և դրվել է շրջանառության մեջ:

	պատասխանատվություն կնախատեսվի ինչպես ապօրինի ջրօգտագործման, այնպես էլ այդ մասին իմանալ՝ չհայտնելու, այդ առնչությամբ գործողություններ չձեռնարկելու համար։					
Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող նոր խորհրդի ձևավորման նպատակով կառավարության որոշման նախագծի մշակում	Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող նոր խորհրդի ձևավորման նպատակով կառավարության որոշման նախագիծը մշակված է, այն ներառում է բոլոր շահագրգիռ պետական մարմիններին, ղեկավարվում է ոլորտը համակարգող փոխվարչապետի կողմից։	Վարչապետի աշխատակազմ		2019թ. մայիսի 31	Չի պահանջվում	Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող նոր խորհրդի ձևավորման նպատակով կառավարության որոշման նախագիծը մշակված է ակնկալվող արդյունքի նկարագրին համապատասխան և պատրաստ է շրջանառության մեջ դրվելու։
Ջրօգտագործողների ընկերությունների և	Ջրօգտագործողների ընկերությունների և	Վարչապետի աշխատակազմ		2019թ. մայիսի 31	Չի պահանջվում	Ջրօգտագործողների ընկերությունների և

ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի գրասենյակի կանոնադրության և ֆինանսավորման ձևաչափի մշակում	ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի գրասենյակի կանոնադրության և ֆինանսավորման ձևաչափը մշակված է:					ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի գրասենյակի կանոնադրության և ֆինանսավորման ձևաչափը մշակված է և պատրաստ շրջանառության մեջ դրվելու:
«Ջրային հարաբերությունների ոլորտի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում:	Ջրային հարաբերությունների ոլորտի հաշտարարի մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակված է, այն ներառում է հաշտարարի գործունեության իրավական և ֆինանսական անկախության բարձր երաշխիքներ:	Կանոնակարգող խորհրդի գրասենյակ	Բնապահպանության նախարարություն, Արդարադատության նախարարություն, Վարչապետի աշխատակազմ	2020թ. հունվարի 31	Չի պահանջվում	Ջրային հարաբերությունների ոլորտի հաշտարարի մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակված է ակնկալվող արդյունքին համապատասխան և պատրաստ է շրջանառության մեջ դրվելու:
Բարեփոխումների կիրարկում						
Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների	Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների	Վարչապետի աշխատակազմ		2019թ. օգոստոսի 1	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ	Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների

գործունեությունը կանոնակարգող խորհրդի ձևավորման նպատակով իրավական ակտերի ընդունումից հետո Կանոնակարգող խորհրդի գրասենյակի ձևավորում:	գործունեությունը կանոնակարգող խորհրդի գրասենյակի ձևավորում և այն ոլորտում փորձառություն և հեղինակություն ունեցող կադրերով համալրում՝ մրցութային կարգով:				աղբյուրներ	գործունեությունը կանոնակարգող խորհրդի գրասենյակը գործում է:
Ջրօգտագործողների ընկերությունների համար տվյալների կուտակման միասնական նոր երկրատեղեկատվական համակարգի և այլ տեղեկատվական ենթակառուցվածքների նախագծում և ներդրում:	Նախագծել և ներդնել ՋՕԸ-երի գործունեությանն առնչվող տվյալների (այդ թվում ջրառի, ջրտուքի, ոռոգման ջրի մատակարարման հայտերի, դրանց ծավալների, հողակտորների չափսերի, մշակաբույսերի, նորմատիվային ցուցանիշների, ջրօգտագործողների կողմից վճարման ենթակա գումարների, յուրաքանչյուր ջրօգտագործողի մասով դեբիտորական պարտքի վերաբերյալ տվյալների) հավաքման, մշակման, վերլուծության և տարածման նպատակով	Կանոնակարգող խորհրդի գրասենյակ		2020թ. հունվարի 1	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ջրօգտագործողների ընկերություններում ներդրվել և շահագործվում է ակնկալվող արդյունքի նկարագրին համապատասխան միասնական երկրատեղեկատվական համակարգ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

	երկրատեղեկատվական համակարգեր, ապահովել դրանց սպասարկման համար անհրաժեշտ ծրագրա-ապարատային, մասնագիտական ռեսուրսները: Ներդնել տեղեկատվության հավաքման, կուտակման, մշակման, տարածման համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ:					
Մշակել և ՋՕԸ-երում ներդնել կոռուպցիայի կանխարգելման և գործունեության թափանցիկության հուսալի մեխանիզմներ:	Մշակել կոռուպցիայի կանխարգելման՝ այդ թվում ՋՕԸ կառավարման մարմիններում ներգրավված անդամների գույքի և եկամուտների, ինչպես նաև շահերի բախման հայտարարագրման ընթացակարգեր, ապահովել ՋՕԸ գործունեությանն առնչվող բոլոր տվյալների, այդ թվում երկրատեղեկատվական համակարգի հասանելիությունը ՋՕԸ վեբկայքում:	Կանոնակարգող խորհրդի գրասենյակ		2020թ. հունվարի 1	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՋՕԸ-երը ունեն վեբկայքեր, այնտեղ հրապարակվում են դրանց կառավարման մարմիններում ընդգրկված անձանց գույքի և եկամուտների, շահերի բախման հայտարարագրերը, ՋՕԸ գործունեությանն առնչվող բոլոր տվյալները, հասանելի են երկրատեղեկատվական համակարգի տվյալները:

Ջրօգտագործողների շրջանում իրականացնել իրազեկման միջոցառումներ, որոնց միջոցով տեղեկացնել ՋՕԸ-ի մասնակցային կառավարման գործընթացներում իրենց իրավունքների և պարտականությունների, նոր օրենքով սահմանվող վերահսկողության, վեճերի լուծման մեխանիզմների մասին:	Զանգվածային լրատվության միջոցների, տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային հասարակական կազմակերպությունների, ջրօգտագործողների ընկերությունների, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի. հաջողակ գյուղատնտեսական գործունեություն ծավալող ֆերմերների հետ համագործակցելով մշակել և իրականացնել քարոզչական արշավներ՝ ՋՕԸ-երի մասնակցային կառավարման գործընթացի վերաբերյալ ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:	Կանոնակարգող խորհրդի գրասենյակ		2020թ. փետրվարի 1	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Զանգվածային լրատվության միջոցներով՝ այդ թվում հեռուստատեսությամբ ցուցադրվել են տեղեկատվական կարճ հոլովակներ, համայնքներում կազմակերպվել են դասախոսություններ, սեմինարներ, համայնքներում փակցվել են իրազեկող պաստառներ, գյուղական համայնքների դպրոցների ավագ դասարաններում անցկացվել են մեկանգամյա դասեր, Ագրարային համալսարանի համապատասխան ոլորտային ֆակուլտետներում անցկացվել են դասախոսություններ համակարգի մասնակցային կառավարման

						թեմայով:
ՋՕԸ-երում հրավիրել նոր ընդհանուր ժողովներ և ապահովել նոր օրենքին համապատասխան կանոնադրության, կառավարման մարմինների ընտրության, բյուջեի հաստատման գործընթացները:	ՋՕԸ-երում հրավիրել նոր ընդհանուր ժողովներ: Ընդունել նոր օրենքին համապատասխան կանոնադրություն, իրականացնել կառավարման մարմինների ընտրություն, բյուջեի հաստատում:	Կանոնակարգող խորհրդի գրասենյակ		2020թ. փետրվարի 1:	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՋՕԸ-երը ընդունել են նոր կանոնադրություն, մասնակցային, թափանցիկ և ժողովրդավարական եղանակով ընտրել են նոր կառավարման մարմիններ, ընդունել են բյուջեն և գործում են: